ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N « ԿՖԲԳՀԻ-ԳՀ-ԱՊՁԲ 2021/6»

ք. Երևան

«22» նոյեմբեր 2021թ.

«Կուրորտաբանության և ֆիզիկական բժշկության ԳՀԻ» ՓԲԸ-ը ի դեմս տնօրեն Կարապետ Ավագյանի, որը գործում է «Կուրորտաբանության և ֆիզիկական բժշկության ԳՀԻ» ՓԲԸ-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Ստեփան Հովհաննիսյան Սերգեյի» ԱՁ-ն, ի դեմս տնօրեն Ստեփան Հովհաննիսյանի, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.4 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ << օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.5 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.6 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.7 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.8 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.9 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.10 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

2.4.11 Պայմանագիրը կատարելու ժամանակ, պայմանագրի գնի ավելի քան 50 տոկոսը՝ հանրագումարային ձևով, ուղղել հայաստանյան ծագում ունեցող աշխատանքային և/ կամ արտադրական ռեսուրսների օգտագործման միջոցով պայմանագրի կատարմանը: Պայմանագիրը կատարել սույն պայմանագրի հավելված N 1.1 ով հաստատված աշխատակիցների և հայաստանյան ծագում ունեցող ապրանքների մատակարարման միջոցով :

2.4.12 Պայմանագրի կատարման շրջանակում յուրաքանչյուր փոփի հանձնման-ընդունման արձանագրության հետ մեկտեղ պատվիրատուին ներկայացնել տվյալ փոփի կատարումն ապահովելու նպատակով օգտագործված հայաստանյան ծագում ունեցող արտադրական ռեսուրսների ծագման երկրի սերտիֆիկատների և ռեսուրսների ձեռքբերման հաշիվ-ապրանքագրերի, ինչպես նաև իր կողմից հաստատված տեղեկանքի պատճենները՝ համապատասխան թվով աշխատողներին վճարված գումարների մասին, նշելով ըստ աշխատողների վճարված գումարների չափերը և վերջիններիս հանրային ծառայության համարանիշները:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 20 835 000 (քսան միլիոն ութ հարյուր երեսունհինգ հազար) ՀՀ դրամ: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

3.4 Սույն պայմանագրի 2.4.11 և 2.4.12 կետերով սահմանված պայմանների կիրառման դեպքում, եթե ներկայացված տեղեկատվությունը գնահատվում է սահմանված պահանջներին համապատասխանող, ապա ՀՀ կառավարության 01.04.2021թ. թիվ 442-Ն որոշմամբ սահմանված կարգով և պայմաններով վաճառողին փոխհատուցվում է պայմանագրի գնի 1 տոկոսը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված __365__ օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին: 8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
«Կուրորտաբանության և ֆիզիկական բժշկության ԳՀԻ » ՓԲԸ	«Ստեփան Հովհաննիսյան Սերգեյի» ԱՁ
ք. Երևան, Օրբելի եղբ. 41	ք. Երևան, Քաջազնունի փ./շ/5/10
ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ ԲԲԸ "Արաբկիր" մասնաճյուղ	Կոնվերսբանկ ՓԲԸ
Հ/Հ 163058101466	Հ/Հ 19300612824600
ՀՎՀՀ՝ 00000413	ՀՎՀՀ՝ 40065986
Էլ.հասցե՝ Fizhashv41@yandex.ru	Էլ.հասցե՝ stepan2848@gmail.com
Տնօրեն՝ Կ. Ամալյան	Տնօրեն՝ Ստեփան Հովհաննիսյան
----------	----------
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 1
«22» նոյեմբեր 2021թ. կնքված
« ԿՖԲԳՀԻ-ԳՀ-ԱՊՁԲ 2021/6» ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի									
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	ապրանքային նշանը, մակիշը և արտադրողի անվանումը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատակարարման		
							հասցեն	ենթակա քանակը	Ժամկետը
1	33151180	Վերականգնողական կենտրոնի մարզասրահի սարքավորումների հավաքածու		լրակազմ	20 835 000	1	ք. Երևան, Օրբելի Եղբայրներ 41	1	Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 20 օրացույցային օրվա ընթացքում

տեխնիկական բնութագիրը/ սարքավորումների հավաքածուի բացվածք		
1	Էլեկտրական վերականգնողական ուսումնական մահճակալ, չափսերը՝ 190-ից 200սմ*120-ից 130սմ*50-ից 55սմ մինչև 80-ից 85սմ, նյութը՝ մետաղ և սպունգ-արհեստական կամ բնական կաշի, քանակը՝ 4հատ, պարտադիր միայն բժշկական նշանակության, նկարը ներկայացվում է կողմնորոշման համար, մասնակիցը կարող է առաջարկել նկարից տարբերվող /գույն, ձև/ ապրանք	
2	Քայլելու մարզման աստիճաններ բազմակողմ, աստիճանների հեռավորությունը 10-ից 13սմ, , չափսերը՝ 330-ից 340սմ*140-ից 150սմ*130-160ից մինչև 140-170սմ, քաշը՝ նվազագույնը 130կգ, բեռնողունակությունը՝ նվազագույնը 130կգ, քանակը՝ 1հատ, պարտադիր միայն բժշկական նշանակության, նկարը ներկայացվում է կողմնորոշման համար, մասնակիցը կարող է առաջարկել նկարից տարբերվող /գույն, ձև/ ապրանք	
3	Վերականգնողական քայլելու աթոռ անջրանցիկ կաշվե փափուկ նստատեղով, չորս անիվներով, արգելակով, մետաղական հիմքով, քանակը՝ 5հատ, պարտադիր միայն բժշկական նշանակության, նկարը ներկայացվում է կողմնորոշման համար, մասնակիցը կարող է առաջարկել նկարից տարբերվող /գույն, ձև/ ապրանք	
4	Վերին վերջույթների և ստորին վերջույթների վերականգնողական ուսուցման համակարգ, նստատեղով, հեծանվածև, տվյալները արտացոլող մոնիտորով, չափսերը՝ 130-ից 140սմ*60-ից 70սմ*120-ից 130սմ, մետաղական հիմքով, քանակը՝ 2հատ, պարտադիր միայն բժշկական նշանակության, նկարը ներկայացվում է կողմնորոշման համար, մասնակիցը կարող է առաջարկել նկարից տարբերվող /գույն, ձև/ ապրանք	

5	Սարժական աթոռ անիվներով, ծալվող, չափսերը՝ 80-ից 90սմ, 50-ից 60սմ, 90-ից 100սմ, քաշը՝ 15-ից 20կգ, մետաղական հիմքով, անջրանցիկ կաշվե փափուկ նստատեղով, քանակը՝ 6հատ, պարտադիր միայն բժշկական նշանակության, նկարը ներկայացվում է կողմնորոշման համար, մասնակիցը կարող է առաջարկել նկարից տարբերվող /գույն, ձև/ ապրանք	
6	Էլեկտրական բժշկական դանդաղ վազքուղով համակարգ, բարձրությունը՝ 190-250սմ, չափը՝ 120-ից 130սմ*100-ից 110սմ*190-230սմ-ից մինչև 200-250սմ, թևատակերի միջև լայնությունը՝ 60-ից 70սմ, թևատակերի բարձրության կարգավորելի միջակայքը՝ 70-170սմ, ոտքերի միջև լայնությունը՝ 90-ից 100սմ, մարտկոցը՝ 100-240վ, առջևից հետևի բազկակալի կարգավորելի միջակայք՝ 15-30սմ, բեռնատարողությունը՝ նվազագույնը 130կգ: Վազքուղին: Չափը՝ բացված՝ 170-ից 180սմ*70-ից 80սմ*120ից 140սմ, վազքի տարածք՝ 40-ից 50սմ*120-ից 130սմ, լարումը՝ 220-240վ, շարժիչի հզորությունը՝ նվազագույնը 2ձիաուժ, աշխատանքային միջավայրի ջերմաստիճանը՝ 0-40°C, արագություն ՝ նվազագույնը 1.0կմ/ժ-ից*նվազագույնը 10կմ/ժ, սրտի հաճախության հայտնաբերման միջակայքը՝ 50-199BPM, օգտագործողի առավելագույն քաշը՝ 120 կգ, թեքություն ՝0-15%, էկրանը՝ LED, պետք է ցույց տա՝ արագություն, ժամանակ, հեռավորություն, կալորիա, զարկերակ, քանակը՝ 1հատ, պարտադիր միայն բժշկական նշանակության, նկարը ներկայացվում է կողմնորոշման համար, մասնակիցը կարող է առաջարկել նկարից տարբերվող /գույնով կամ կառուցվածքով տարբերվող/ ապրանք	
7	Զուգահեռ ձողերով համակարգ, չժանգոտվող պողպատից և ամուր փայտից /կոմպոզիտային տախտակ/, գորգը՝ 330ից 350սմ*110-ից 120սմ*70-120սմ-ից 80-130սմ, բարձրության ճշգրտման միջակայքը 70-120սմ-ից 80-130սմ, լայնության ճշգրտման միջակայքը 30-50սմ-ից 40-60սմ, լծակի տրամագիծը՝ 30-ից 40մմ, լծակի ստատիկ ծանրաբեռնվածությունը 135 կգ-ից ոչ պակաս, ուղղիչ ափսեի թեքությունը՝ 15, քանակը՝ 1հատ, պարտադիր միայն բժշկական նշանակության, նկարը ներկայացվում է կողմնորոշման համար, մասնակիցը կարող է առաջարկել նկարից տարբերվող /գույնով կամ կառուցվածքով տարբերվող/ ապրանք	
8	Քայլելուն նպաստող վերականգնող հարմարանք, հիմքը՝ բարձր ածխածնային պողպատ, ընդհանուր բարձրությունը՝ 110-150սմ, պետք է ունենա բարձրության կարգավորում, թևատակերի լայնությունը՝ 30-50սմ, ապրանքի իրանը՝ 40-ից 50սմ, առջևի և հետևի ուղու երկարությունը՝ 60-ից 70սմ, ձախ և աջ ուղու երկարությունը՝ 50-ից 70սմ, պետք է ունենա շասսիի կայուն կանգառ-արգելակ, թեաատակերի լայնությունը կարող է փոփոխվել, անիվները՝ 360 աստիճանով պտտվող, հետևի անիվները՝ ձեռքի արգելակման սարքով, թույլատրելի բեռնվածությունը՝ մինչև 100կգ, քանակը՝ 2հատ, պարտադիր միայն բժշկական նշանակության, նկարը ներկայացվում է կողմնորոշման համար, մասնակիցը կարող է առաջարկել նկարից տարբերվող /գույնով կամ կառուցվածքով տարբերվող/ ապրանք	
9	Մատների ուժը կարգավորող շարժման վարժությունների հարմարանք, ալյումինե խառնուրդից, պետք է մատները և դաստակի հոդերը պահի ճկման վիճակում, ինչպես նաև վարժեցնի մատները, նախատեսված է կաթվածից, հեմիպլեգիայից, մատների դիսֆունկցիայից, ուղեղային արյունահոսություն, ուղեղի ինֆարկտ, ձեռքի մկանների հաշմանդամություն և նմանատիպ հիվանդություններով տառապող հիվանդների համար, պետք է ձևավորի ձեռքերի և մատների մկանների և արմունկի ջլերի ուժը և ճկունությունը, քանակը՝ 4հատ, պարտադիր միայն բժշկական նշանակության, նկարը ներկայացվում է կողմնորոշման համար, մասնակիցը կարող է առաջարկել նկարից տարբերվող /գույնով կամ կառուցվածքով տարբերվող/ ապրանք	
10	Ուսի անիվ վարժությունների հարմարանք, չափը՝ 70-ից 80սմ*30-ից 40սմ*90-ից 100սմ, նախատեսված է ուսի և արմունկների հոդերի շարժունակությունը բարելավելու համար՝ նախաբազկի կողի մկանների ուժը պտտելով, քանակը՝ 1հատ, պարտադիր միայն բժշկական նշանակության, նկարը ներկայացվում է կողմնորոշման համար, մասնակիցը կարող է առաջարկել նկարից տարբերվող /գույնով կամ կառուցվածքով տարբերվող/ ապրանք	

11	Համրիչ սարք, չափը՝ 80-ից 90սմ*50-ից 60սմ*70-ից 80սմ (առանց համրերի), համրերի քաշը և քանակը՝ 1 ֆունտ/հատ ընդհանուր 2 հատ; 2 lb/կտոր ընդհանուր 4; 3 ֆունտ/կտոր ընդհանուր 4-ի համար; 4 ֆունտ/կտոր ընդհանուր 4-ի համար; 5 ֆունտ/կտոր ընդհանուր 4-ի դիմաց, քանակը՝ 1հատ, պարտադիր միայն բժշկական նշանակության, նկարը ներկայացվում է կողմնորոշման համար, մասնակիցը կարող է առաջարկել նկարից տարբերվող /գույնով կամ կառուցվածքով տարբերվող/ ապրանք	
12	Մինի ստեպպեր վարժության հարմարանք, չափը՝ 40-ից 45սմ*30-ից 35սմ*20-ից 25սմ, նախատեսված է ստորին վերջույթների հոդերի տիրույթը և ֆունկցիոնալ գործունեությունը համակարգելու և բարելավելու համար, հիմքը մետաղից, քաշը՝ 700գ-ից 900գ, բեռնողունակությունը՝ մինչև 150կգ, քանակը՝ 4հատ, պարտադիր միայն բժշկական նշանակության, նկարը ներկայացվում է կողմնորոշման համար, մասնակիցը կարող է առաջարկել նկարից տարբերվող /գույնով կամ կառուցվածքով տարբերվող/ ապրանք	
13	Ոտքերի համար նախատեսված մեխանիկական մինի հեծանիվ, չափը՝ 50-ից 60սմ*40-ից 50սմ*40-ից 50սմ, նախատեսված է վերջույթների շարժման շրջանակը և ֆունկցիոնալ գործունեությունը համակարգելու և դիմադրությունը բարելավելու համար, հիմքը մետաղից, քաշը՝ 700գ-ից 1500գ, բեռնողունակությունը՝ մինչև 150կգ, քանակը՝ 4հատ, պարտադիր միայն բժշկական նշանակության, նկարը ներկայացվում է կողմնորոշման համար, մասնակիցը կարող է առաջարկել նկարից տարբերվող /գույնով կամ կառուցվածքով տարբերվող/ ապրանք	
14	Ֆիզիոթերապեվտիկ պատի ձող, փայտե, պարտադիր բնական փայտից, ամբողջովին բնական նյութերով լաքված, էկոլոգիապես մաքուր, նախատեսված մինչև 120կգ ծանրություն ապահովելու համար, չափսերը՝ 210-ից 230սմ*70-ից 80սմ: Քաշը՝ 15-ից 25կգ, ամրացվում է պատին: Նախատեսված է ֆիզիկական թերապիայի համար՝ բարելավելու համար հավասարակշռությունը և շարժման տիրույթը, քանակը՝ 1հատ, պարտադիր միայն բժշկական նշանակության, նկարը ներկայացվում է կողմնորոշման համար, մասնակիցը կարող է առաջարկել նկարից տարբերվող /գույնով կամ կառուցվածքով տարբերվող/ ապրանք	

* Բոլոր ապրանքների համար տրվում է 1 տարի երաշխիքային սպասարկում, ապրանքները պետք է լինեն նոր, ապրանքների տեղափոխումը և տեղադրումը իրականացվելու է մատակարարի կողմից

*** Ապրանքի մատակարարման ժամկետը, իսկ փուլային մատակարարման դեպքում՝ առաջին փուլի մատակարարման ժամկետը, պետք է սահմանվի առնվազն 20 օրացուցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ապրանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում: Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:*

ԳՆՈՐԴ

«Կուրորտաբանության և ֆիզիկական բժշկության ԳՀԻ» ՓԲԸ
ք. Երևան, Օրբելի եղբ. 41
ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ ԲԲԸ "Արաբկիր"
մասնաճյուղ
Հ/Հ 163058101466
ՀՎՀՀ՝ 00000413
Էլ.հասցե՝ Fizhashv41@yandex.ru
Տնօրեն՝ Կ. Ավագյան

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

«Ստեփան Հովհաննիսյան Սերգեյի» ԱՁ
ք. Երևան, Քաջազնունի փ./շ/5/10
Կոնվերսբանկ ՓԲԸ
Հ/Հ 19300612824600
ՀՎՀՀ՝ 40065986
Էլ.հասցե՝ stepan2848@gmail.com

Տնօրեն՝ Ստեփան Հովհաննիսյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2
«22» նոյեմբեր 2021թ. կնքված
« ԿՖԲԳՀԻ-ԳՀ-ԱՊՁԲ 2021/6» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

<< դրամ

Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Ապրանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	33151180	Վերականգնողական կենտրոնի մարզասրահի սարքավորումների հավաքածու											20 835 000	20 835 000	20 835 000

* *Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամողական կարգով:*

ԳՆՈՐԴ

«Կուրորտաբանության և ֆիզիկական բժշկության ԳՀԻ» ՓԲԸ
ք. Երևան, Օրբելի եղբ. 41
ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ ԲԲԸ "Արաբկիր" մասնաճյուղ
Հ/Հ 163058101466
ՀՎՀՀ՝ 00000413
Էլ.հասցե՝ Fizhashv41@yandex.ru
Տնօրեն՝ Կ. Ավագյան

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

«Ստեփան Հովհաննիսյան Սերգեյի» ԱՁ
ք. Երևան, Քաջազնունի փ./2/5/10
Կոնվերսբանկ ՓԲԸ
Հ/Հ 19300612824600
ՀՎՀՀ՝ 40065986
Էլ.հասցե՝ stepan2848@gmail.com

Տնօրեն՝ Ստեփան Հովհաննիսյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
« » նոյեմբեր 2021թ. կնքված
« **ԿՖԲԳՀԻ-ԳՀ-ԱՊՁԲ 2021/6** *» ծածկագրով պայմանագրի*

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
«22» նոյեմբեր 2021թ. կնքված
« ԿՖԲԳՀԻ-ԳՀ-ԱՊՁԲ 2021/6» ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն